ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ապրիլի 2020 թվականի N 16

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լերմոնտովո համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 5-րդ հավելվածների:

2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 5-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2020 թվականի N 17

ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետով , 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2020 թ-ի բյուջեի բ.10 խ.4 դ.1 հոդված 4729-ից համայնքի բնակիչ Լամարա Հրաչի Շահբազյանին ցուցաբերել դրամական օգնություն 10000 /տասը հազար/ դրամի չափով՝ նորածին երեխայի խնամքի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**